տաճկերէն. նոյն գրքին վերջը Հաննի գրած է Ս. Տեղեաց վրայ քերթուածներ. ինչպէս նաև ունի գոյեաs մը (անտիպ) Շղթայակիրին վրայ։ (ՄՁ. Թ. 598) ձեռագիրին մէջ կը հանդիպինք իր մահուան մասին հետևեալ յիշատակարանին. «Ի թվ. ՌՃՁԲ (=1733)ին և յունիս ամսոյ ժբ ին օրն գշբթ. Ս. Դանիէլի և երից մանկանցն տօնին առ Ա.ծ. փոխեցաւ եղբայրն իմ Հաննի Յովհաննէս վրդ.ն. որ էր տան որդի Սրբոյն Յակոբայ. և աթոռակալ մեծի Գրիգոր վրդ.ի Բաղիշացւոյ. ընթերցողք լի սրբոտիւ ասացէք Ա.ծ. ողորմին. զի կէնճ էր հասակաւն և մատղաշ և քաղցր տեսօք և եղինք մարմին սորա ի Ս. Փրկիչ մեծի Մինաս վրդի. կշտի. զի բ ամ և բ ամիս ի մէջ մահճաց տամլայի ցաւ կրեաց. չեղև վերջն ոչատել այսքան դեղ և բժիշկ չեղև օգուտ և ճար, ախուպեթ ան ցաւով գնաց տէրն ողորմի հոգւոյն...»։ (Ասպ. Ցուց. տեսր ԺԸ. էջ 4495)։

1733ին Հաննէ վրդ.ի մայրը մահ. Արզու՝ իր որդւոյն և աղջկան մահ. Հիսանեի յիշատակին Ս. Յակոբի վանքին կը նուիրէ ոսկիէ ականապարդ խաչ մը կենաց փայտի մասունքով։ (Ցուց. Պ.). Հաննէի տուած յիշատակներու մասին տեսնել (ՄՁ. Թ. 532)։ Իր տապանագիրն է հետևեալը.

«Այս է տապան հանգստեան. բազմաչխատ աթոռակալ Հաննէ Յովհաննէս աստուածաբան վարդապետի և արքեպիսկոպոսին Երուսաղէմացւոյ որ ԺԵ ամ զաթոռակալութեան գործն կատարեաց եւ վիշտս բազումս կրեաց ի պարտուց վճարումն և ի չինութիւնն. աստուածազիր աթոռոյն սրբոյն Յակոբայ. և տարաժամ մահուամբ փոխեցաւ ի Քրիստոս ի թիւ ՌՃՁԲ (=1733) ամին. և ի յունիս ԺԱ. և մեծ սուգ եթող սիրելեաց իւրոց. որք հանդիպիք և ընթեռնուք լի բերանով յիշեցէք. և Ա.ծ. ողորմի ասացէք նմա. և տէր ձեզ ողորմեսցի. ամէն»։ (նաև ՄՁ. Թ. 303. Շղթայակիրին գրչութեամբը)։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՊՍ. ԿԵՐԵՄՈՎԻՉ (ՄՈԼՏԱԻԻՈՑ), ԻԼՈՎՑԻ.— Առ. Իլովի (1665—1669). ազգական Նիկոլ եպս.ի։ Մոլտաւիայէ դարձին, երկար ժամանակ չըջագայած է հայաբնակ գաւառները և հօթն տարի մնացած է Ս. Երուսաղէմի մէջ ուր կը ձեռնադրուի վրդ.։ Իլովի իր պաշտօնավարութեան չրջանին՝ թէև Հռոմէն թոչակ կ'ստանար, բայց յարած չէ լատինականութեան,